

քէն մնացած :

Իրենց գործունէութիւնը լոկ գրական երկասիրութեանց մէջ չի սահմանափակուիր սակայն : Վանքէն դուրս հայութեան բոլոր կեդրոններուն մէջ անոնք տարածուեցան և շանային տարածել ինչ որ գտած էին ազգային կեանքի յիշատակներէն : Մխիթարեան վարժարանները Թուրքիոյ մէջ մեր ազգային լուսաւորութեան ու դաստիարակութեան առաջին կանոնաւոր հիմնարկութիւններն եղած են , այնպէս որ հեռաւոր անկիւններու մէջ , հայութեան դաստիարակութեան դաղափարը սնուցանող հարուստ ազգայիններ անոնց գիմեցին այդ գործին ձեռնարկութեան համար և անոնց վստահեցան կարեւոր դրամագլուխներ : Որքան ալ ամբասիր չըլլայ այդ գումարներու գործածութեան մէջ Մխիթարեան անունը , անոնք ոչ նուազ օգտակար եղան իրենց Մուրատ-Ռափայէլեան վարժարաններով , որոնք , մօնաւանդ Բարիլի մէջ իրենց ամենափայլուն շրջանը ունեցան և արդիւնաւոր պատուներ տուին ազգին :

Ու դեռ այսօր , մխիթարեանները կը ջանան դուրս ելլել իրենց վանականի սահմանափակ շրջանակէն , կուզեն յարմարիլ ազգին ժամանակակից պահանջներուն , անոր պէտքերուն , ճաշակին ու զարգացման ըստ բաւականին համապատասխանող արդիւնքներ տալով : Ու յառաջգիմութեան , զարգացման այս եռանդը որքան աւելի կը մնայ Մխիթարեանց մէջ , անոնք միշտ օգտակար ու պիտանի պիտի ըլլան : մեղի և ազգը պիտի գիտնայ յարգել զանոնք ու գնահատել անոնց արժանիքը :

ՇԱՀԱՊ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՈՒՇ , 26 Յուլիս

Մշոյ շորս կողմի ընտնային գիրքերը գրաւուած են 20 գրականութիւններով : Հիւսիսային կողմէն 1. Հասնանցի , 2. Ճրպարանցի , 3. Պէլպաշի , 4. Շիրքէշ , 5 Սուլապի : Արեւելեան կողմէն , 6 Ձէրքէշ , 7 Սէիտանցի , 8 Ձըռքցի : Հարաւային կողմէն , 9 Խուլթեցի , 10 Մօթկցի , 11 Նըհիցի , 12 Ալատին պէյի սերունդէն առաջ եկած պէյութիւններ , Իսկ արեւմտեան կողմէն ալ , 13 Գարսեցի , 14 , Կիւնճեցի , 15 Պատկանցի , 16 Սասունցի , 17 Հայաբրանցի , 18 Ընդզգոթցի , 19 Տուտիցցի , 20 Ըլմանցի և այլն :

Այս քիւրտ ցեղերն լոկ անուանական կերպով Սուլթանները կը ճանչնային իրենց զլխաւոր արհեստն էր գողութիւնն ու աւարաւորութիւնն : Մինչեւ վերջին օրերը զգուշութեամբ ու սահմանափակ վիճակի մէջ կը գործէին , կառավարութեան խստութիւններու ենթարկուելէ վախճալով : Իսկ այս վերջին տարիներն կառավարութիւնը իրեն հայալիւն ծրագիրն օր առաջ իր զլուխ հանելու համար , բացարձակապէս սկսաւ այդ ցեղերն ձեռք առնուլ , ցեղապետներուն ու նշանաւոր գող և մարդասպաններուն պատուանշաններ պարգեւեց , առանց բացառութեան ամէնքին ալ նոր սիստէմի զէնքեր բաժնեց ի պահանջել հարկին ալ կաշառեց մեղ դէմ լարելով : Եթէ քիչ մըն ալ մերձեւ քրդաց-մէջ բարեկամութիւն կար , ան ալ խախտեց ու մէկզմէկու անհայտ թշնամի գործուց :

Գիւրտերն , որ մինչեւ այդ ժամանակ պատասխանատու-

թենէ կը քաշուէին , այլ եւս սկսան օր ցերեկին ազատ համարձակ ասպատակել , աւերել , քանդել , սպաննել , առեւանգել իրենց ետեւէն լաց , կոծ ու ամայութիւն թողլով :

Հայ գիւղացին , որ մինչեւ այդ ժամանակ մասնաւոր աւերումներուն կարեւորութիւն չէր տար , երբ անսաւ թէ չափ ու սահման անցաւ , զգաց իր սխալը ու էն առաջ սուր և հրացանին վազեց . այդ օրերէն սկսեալ ստրուկ ու ազատ ապրած երկու հակառակ ուժերն սկսան իրարու զարնուիլ , ու Մշոյ աշխարհը անխլիւսութեան մատնել :

Մշեցին գիտցաւ ըմբռնել ժամանակի պահանջքն ու ինքզինքն յեղափոխութեան գիրի ձգեց . այսպիսով , 90 թուականներէ սկսեալ մինչեւ այսօր , միմիակ իւր նշանաբան ընարեց - մինչեւ վերջին շունջը կուրիլ մինչեւ որ իւր թանկագին օրեան գնով ազատութիւն ձեռք բերէ :

Այսօր Մուշն իւր գաւառներով կատարեալ պատերազմական դաշտ մը կը ներկայանայ , արիւն առեակներու նման կը վազէ , մարդասպանութիւն սովորական բաներ են դարձած մեղ համար : Այլեւս անկարելի է այս աշխարհի մէջ կարգ ու կանոն վերահաստատուի . քանի թիւրք վերթութեամբ Ընէթիմ կը տիէ , քանի կայ թիւրքը , չը կայ կեանք , չկայ առաջնացութիւն , չը կայ ընչքի , ստացուածքի , կեանքի և պատուոյ ապահովութիւն : այդ ազգը գաղան է . քակել և քանդել միայն գիտէ : Պարզ գիւղացին իսկ ըմբռնած է այդ , ու ատոր համար ալ այսօր սիրայօժար իր էն յարգելին ու պաշտելին յանձն առած է զոհել , յեղափոխութեան սիրուն և սպառնացող վտանգին դէմ կուրելու համար :

Երբեմն Հնչակեան գործիչներն էին որ եռանդ ու ոգնորութիւն վաւ կը քաշէին մեր մէջ , այժմ ալ շրջակայցութիւն ու իր սպառազինուած խմբակներն են որ , ամէն վտանգ յանձն առած , մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը կը վազեն գալիք վտանգին դիմագրելու համար : Շատ պայղ է թէ հնչակեանց տարածում կը բերէ , որքան խստութիւններ ու ճնշումներ կրկնապատկուին նոյնքան ալ հայդուկային խումբերը կը ստուարանան մեր մէջ :

Ես ունիմ և շատ մը նպատաւոր գրելիք , բայց . . . ինչ ինչ պատճառաւ չեմ կրնար գրել . մօտիկ ապագան ամեն բան կը պարզէ :

Անցեալները Ըլմանցի Աշիրէթի ցեղապետ Պալաթի տղան իր քանի մը ծառաներով գիշեր առտն մտնակայ հայ գիւղերն գողութեան կերթայ : Հայդուկային խմբապետներէն մին որ անոնց դրապի ու շատ անգամ ալ զնստած է ատոնցմէ , իր վրէժ լուծելու ու միանգամայն ալ հայ գիւղացիք այդ գաղանէն ազատելու համար , քանի մը օրեր կը հարկադրուի իր խմբով գիշերներ ատոր անցուղարձած անցքեր հսկել : Գիշեր մըն ալ փոզըով հայ գիւղի ու ֆոխերու մէջ տեղ մէկզմէկու կը հանդիպին , երկուստէք հրացանաձգութիւն կսկսի . եւ հայդուկային խումբն այդ նշանաւոր գաղանն իր 5 ընկերներով մէկ տեղ ուղարկելէ յետոյ կանհետանայ :

Մէկզմէկու ետեւէ Մշոյ էն ազգեցիկ աղաներու սպաննումը ան ու սարսափ սփռած է շորս կողմ . այնպէս որ ճան միջտայիի գնդա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՃԻԱՐԱԾՆԵՐԸ

Բարխանի էի գտնվում , Բաքուի նաւթահորերի շրջանում : Ընկերոջս սենեակում բաւական նստելուց յետոյ երկուսով միասին վեր կացանք գնալու մի ուրիշ ընկերով մօտ , ուր մի փոքրիկ հաւաքում կար :

Ընկերոջս բնակարանը և այն գործարանը , ուր նա է ծառայում և ապրում բարձր դիրքի վրայ են գտնվում : Մենք դուրս ենք դալիս գործարանի շրջափակից , եւ իսկոյն մեր աչքի առջեւ պատկերանում է մի տարօրինակ , անտառի նման սեւ ու մութ բան . բայց այդ անտառը ծառերից չէ կազմւած , այլ նեղ հիմքով պիտոմիտաձեւ բարձր ու սուր աշտարակներից : Այդ հսկայական աշտարա-

կային անտառի զանազան կէտերով ազատ լուսով մրիմիջեց երեւումն բազմաթիւ ճրագներ . ճրագները ելեքտրական են , բայց խոնաւ մըթնոլորտը այնքան մուր է ծրծիլ որ ելեքտրական լոյսը այդ մուր է ժածիկ դարձած օդի միջով հասարակ ձիթածրագի տպաւորութիւն է թողնում :

Սեւ , սուր , նեղ , բարձր աշտարակները փայտաշէն են և կոչվում են «վիշկաներ» , որոնք շինվում են նախաճորի վրայ . դրա մէջ են տեղադրված նաւթը հանող գործիքները և գործաւորները : Ու այդ տեսակ վիշկաներ հազարներով կան նաւթահանքերում :

Մենք երբ ներս մտանք այդ սեւ ու մութ աշխարհը , արդէն բոլորովին երեկոյ էր . չնայելով բազմաթիւ ելեքտրական լուսաւորներին , հազիւ կարողանում էինք ճանապարհ գտնել : Այդ խառն աշխարհի լուսութիւնը խանդավորում էին վիշկաների մէջ գործող մեքենաների և բայ թողնված շրջի-

ձայները : Ճանապարհին , վիշկաների դիմաց , կամ նրանց արանքներում մեր աչքին էին հանդիպում մազափափոխներով լուրջ խոստած և աւազակային գէմքերով գազտանցիները որոնք պահապաններ զեր են կտտաւում նախաճորի աշխարհում , իսկ յարմար առիթը եկած միջոցին մարդ են թաղանթում և սպաննում :

Մի քանի րոպէ ես ինձ շատ վառ և ճնշված զգայի . մտաւ ու մտի միջակայք , սեւ , սուր հսկայական վիշկաները , մեռելի գլխի վրա վառվող կանթեղի լոյսով փայլող բազմաթիւ ճրագները , մեքենաների խուլ ձայները , շոգեմեքենաների յուսահատական ճիչերը , սեւացած ու սպառնական զսպտանցիները իրար հետ միացած ինձ վրա մի տարօրինակ տպաւորութիւն թողին . զարգանդեցրին , ինչպէս ասում է մեր ժողովուրդը : Այդպիսի բան ես չէի զգացել ոչ մութ անտառներում , ոչ խոր ձորերում եւ ոչ էլ բարձր լեռների վրա :

Ընկերս եւ ես շարունակում էինք մեր ճանապարհը . լուռ ու մունջ , երկուսս էլ անձնատուր էինք եզիւմեր մտածումներին . ոչ , գուցէ ընկերս մտածում էր , որովհետեւ նա սովոր էր այդ տեսարանին , սակայն ես չէի մտածում , ես ամբողջովին եմ թարկվել էի իմ կրօն տպաւորութեան շարժում էի . մեքենայաբար և դրոհմար էլ շարունակ ասք . կամ քարի էր դիպչում , կամ ցցի , կամ թէ փոփ մէջ էր ընկնում : Այդ տեսակ զէպերում էր միայն որ լսում էի ընկերոջս զգուշացնող ձայնը .

— Ուշադրութեամբ դնա , վեր կընկնես , մի փորձանք կը պատահի . վերջապէս մի նեղ նաւթոտ փողոցով մենք մտանք այն դրժարանի բակը , ուր հաւաքում կար :

II

Մենք մտանք գործարանի բակի մէջ գտնված բնակարաններից մէկը .

կէն սարսափած թուրքի մը կամ քիւրաի մը անկարելի է իրի- կունենբը իր տունէն դուրս գալ մինչեւ առաւօտ:

ՆԱՄԱԿՆԵՐ ԿՈՎՎԱՍՈՅ

IV

Առաջին նամակումս յայտնեցի որ կովկասահայ ներկայ գրականութեան ու մամուլի մէջ մեծերութիւն է ար- բում եւ ոչ մի նոր բան չը կայ:

Փաստներ սասաններս: Ներկայումս մեր յայտնի վիպասան- ները ոչ մի կարեւոր եւ նոր բան չեն արտադրել:

Շիրվանդաղին՝ իր «Բառս» վէպից յետոյ, այլևս աչքի զարնող մի բան չէ աւել իր բնութեցողներին:

Լիօն՝ «Մէլիքի աղջիկը» պատմա- կան վէպից յետոյ, միայն պատմա- կան ուսումնասիրութիւններով է զբաղվում եւ իր ճիշդի մէջ սնանկա- նում է:

Վրթանէս Փափագեան, որ բաւական մեծ ապագայ էր խոստանում, ներ- կայումս աչքի զարնող ոչ մի աշխա- տութիւն չէ ունեցել:

Պազարոս Աղայանը բոլորովին չէ գրում:

Եւրծ Պոռչուհի միայն խզրգում է Սուեյուզեանը բոլորովին լռել է: Թարգմանական գրականութիւնն էլ շատ դանդաղացել է. Լիսեցեան մէջ- տեղը չըկայ, Փիլիպոս Վարդանեան մէջտեղը չըկայ. Տիգրան Յովհան- նէսեանը երբեմն զբաղվում է այդ գործով: Ի հարկէ խօսքս այն թարգ- մանիչներին մասին է, որոնք թէ լի- զու գիտեն եւ թէ թարգմանելու նիւթ ընտրել գիտեն:

Վիտական գրքեր էլ շատ սակաւ են երեւան գալիս, մանաւանդ Հրա-

տարակչական Բնկերութեան փակվե- լուց յետոյ, Միմրան բժշկականու- թեան վերաբերեալ գրականութիւնն է կենդանացել, շնորհիւ թիւիկ վա- հան Արծրունու եւ Բուզղաղեանի:

Բանաստեղծութիւնը բոլորովին մե- ոսած է. ապագայ խոստացող Յովհան- նէս Յովհաննէսեան իր բանաստեղծու- կան տաղանդը թաղեց էջմիւսի ամէն բան մեղացող մթնոլորտի մէջ: Յով հաննէս թուամանեան թէեւ լաւ բա- նաստեղծ, բայց մտաւոր պաշար չունի եւ շատ քիչ է գրում:

Աւետիք Սահակեան՝ որ խոստա- նում էր լաւ ժողովրդական բանաս- տեղծ լինել, մի կարեւոր բան չար- տադրեց մինչ օրս: Արամ Չարբղ վերջերս հրատարակեց իր մինչեւ օրս գրածները, բայց ամբողջ գրքի մէջ բանաստեղծական եւ ազգու- կայունը հազիւ մի քանի հատ կան:

Քննադատական գրականութիւնը, այնպէս ինչպէս Եւրոպայում է, մեղա- ցանում գոյութիւն չունի:

Այդպիսի գործերով զբաղվում է Տիգրան Յովհաննէսեան, բայց շատ թուովիկ կերպով:

Օրական մամուլը սկսել է աւելի օտարով զբաղվել, քան ի՞նչ մեղանով: Մեր կեանքին վերաբերեալ միայն թատրոնական քննադատութիւնները եւ Բաքուի արդււնաբերութեան մա- սին եղած ուսումնասիրութիւններն են կարեւոր տեղ բռնած ներկայ մա- մուլի մէջ, նոյնպէս եւ պատմական ու- սումնասիրութիւններն ու կրօնական այլեւայլ խնդիրներ: Դրանցից յե- տոյ մեծ տեղ են բռնում կուսակցա- կան նեղ, անհամ, շատ անգամ աղ- տոտ բանակիրները, Հակոտակոր- ղին եւ նրա կարծիքը արհամար- լու վաս սովորութիւնը խոր արմատ է բռնել կովկասեան մամուլի մէջ:

Ի՞նչ է այս բոլորի պատճառը. ար- զեօք իսկապէս կուսակցականութիւ- նը, ինչպէս բացատրում է Ժամանակի խմբագիր Պ. Սիմէոն Հախումեան, թէ մի ուրիշ բան:

Միայն նեղ կուսակցականութիւ- նով բացատրել այս անկումը, շատ միակողմանի եւ սխալ կը լինէր: Մեր կարծիքով աւելի հիմնական եւ լուրջ պատճառներ կան, Միւս ան- գամ կանգնադրածնաք այդ պատճառ- ներին:

Ի՞նչ է այս բոլորի պատճառը. ար- զեօք իսկապէս կուսակցականութիւ- նը, ինչպէս բացատրում է Ժամանակի խմբագիր Պ. Սիմէոն Հախումեան, թէ մի ուրիշ բան:

Միայն նեղ կուսակցականութիւ- նով բացատրել այս անկումը, շատ միակողմանի եւ սխալ կը լինէր: Մեր կարծիքով աւելի հիմնական եւ լուրջ պատճառներ կան, Միւս ան- գամ կանգնադրածնաք այդ պատճառ- ներին:

*** (Շարունակելի)

մեզ դիմաւորեց մի պարոն եւ ներս տարու մի սենեակ, Այնտեղ հաւաք- վել էին 25ի չափ նիհար, ափոյն, եւ նւազած աչքերով երիտասարդ: Բոլորն էլ ձերացած մարդկանց տալարու- թիւն էին թողում, թէեւ գրանց ամենատարեւորը հազիւ 30 տարե- կան լինէր: Այդ երիտասարդներին ձերացրել էր նախնական քիմիա- լորտը եւ կեանքը. թէեւ գրանց մէջ ոչ մի հասարակ գործաւոր չըկար, եւ ամէն մէկը իր ստացած ամսականով կարող էր բարեկեցիկ կեանք ունենալ:

Բայց եւ այնպէս նրանք մաշվելու չիւժ- վէլ էին. գոյծարանական տենդոտ կեանքը իր գոյծը դրել կը գրանց վրա, որոնք մի ժամանակ վառվառն երիտասարդներ էին եւ ամենակատա- ղի թշնամի փակված կեանքի եւ անհա- տական անկասկածները խլով պայ- մաններ:

Այսօր իրենք, ինքնայոթար կերպով եկել էին անհատ կաշկանդող, գոր- ծիք դարձնող գործարանական կեան- քի մէջ մտել:

Բոլորին բարեկեցի ց յետոյ, ես մի քանի վայրկեան շարած զիտում էի կապիտալիզմի այդ գրեթէ զրոյն. գրան- ցից մի քանիսին մամուլութիւնից էի ճանաչում, մի քանիսի մասին վերջին տարիներում էի լսել շատ լաւ, լաւ բաներ. երբէք չէի կարող երեւա- կայել որ գրանց այդպիսի եւ օյսպիսի պայմաններում կը գտնեմ:

Մի կէս ժամ նստելուց եւ փոխա- դարձաբար իրար դիտելուց յետոյ, վերջնական ժողովը բացվեց. ինձնից խնդրված էր տեղեկութիւն տալ ար- տասանմանի հարցութեան կեանքի, նրա արտադրութիւնների եւ ձգտումների մասին — դէպի մեր սազատարական գործը:

Իմ բացատրութիւններից յետոյ՝ մա- րած դէմքերը կամաց կամաց կենդա- նացան, խոսեցին աչքերը սկսեցին փայլել. եւ իմ նկատուածութեանը թէ՛ մեղաքովիւնը միայն կովկասում է ար- բում, նրանցից մէկը պատասխանեց. — Այո՛, ճիշտ է, կովկասում մե-

ԱՆԱՐԺԱՆ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐ

Անցեալ օր հեռագիրը հալոր- դեց որ Օրմանեան Սուլթանէն խնդրած էր քանի մը հայ բան- տարկեալներու ազատումը, իսկ Սուլթանը, փոխանակ այդ խնդի- րը կատարելու, քանի մը հայ հո- գեւորականներու շքանշան նու- թեր է:

Այդ շքանշան ստացողներու մէջ կայ նաեւ յայտնի Բարկէն վարդապետը:

Կը զարմանանք որ Սուլթան Բարկէնի շքանշան կուտայ, եւս առաւել կը զարմանանք որ Բար- կէն այդ շքանշանը Սուլթան Հա- միտի երեսին չի նետեր: Բար- կէնի մը այդպէս կը վայելէր:

Միւս հոգեւորականները, գա- լաւապիս առաջնորդներ եւ տե- զապահներ, ոչ միայն այդ հայա- կերին շքանշանները չեն մեր- ժած, այլ եւ հեռագրով իրենց «հաւատարմական զգայումները մատուցած են յոտս կայսերական գահոյից» ինչպէս կը հաղորդէ «Արեւելք»:

Ո՛րչափ հրապուրիչ են Սուլ- թանին այդ շքանշանները... մեր հոգեւորականութեան մէջ միայն իզմիրլեան մը գանուեցաւ որ կրցաւ արհամահել Սուլթանին հայ արեան մէջ թաթախուած ձեռքէն նուէրը մերժել:

Շքանշանները ընդունել են գրեթէ բոլոր կարեւոր հայա- բնակ գաւառներու առաջնորդ- ները եւ տեղապահները. արդ- եօք աստեղ ո՛ր ծառայութեան համար Սուլթանը կը վարձատրէ:

Էրզրումի, Մուշի, Վանա, Խարբերդի, Արտաքիլիսի, Կէսա- ռիոյ, Արֆայի հայ առաջնորդ- ները ի՞նչ ծառայութիւն կրնան մատուցանել Սուլթան Համիտին, ինչով կրնան արժանանալ այդ Հրէշին համարութեանը, եթէ ոչ իրենց յանձնուած հոտին հա-

մառաջ շահերը չը պաշտպանե- լովն:

աւելութիւն է տրուում, բայց մեղաւո- րը մենք չենք. մեղաւորը մեր առաջ- նորդները եւ ղեկավարները են: Մենք լուրջս էլ ակամայ ենք թափվել այս- տեղ. այս օր էլ գործ լինի մենք ա- մէն բան կը թողնենք եւ գողափարի ետեւից կը գնանք: Մեզ համար այս կեանքը կատարեալ տանջանք է. ոչ կարողանում ենք բոլորովին հրաժար- վել հին երազներից եւ ձգտումներից որ բոլորովին անձնատուր լինինք գրամ շահերուն, ոչ էլ մեր ուզած գործի մէջ ենք կարողանում նետվել:

Եւ ի՞նչպէս նետվենք, երբ տես- նում ենք թէ նախին բոլոր ղեկավար- ները ամէն բան թողած՝ իրենց կեան- քը եւ հանգստութիւնը ապահովելու ետեւից են ընկել: Մենք կարծում ենք որ այլ եւս գործ չըկայ. մեզ թւում է թէ հայկական յեղափոխութիւնը ու հարցը մեռաւ եւ գրաւ համար էլ մեր ղեկավարները սուս են արել: Մենք ենթադրում ենք որ մեր յեղա- փոխական փորձերը սպառուցին թէ

բազաւ շահերը չը պաշտպանե- լովն:

Աւ Բարկէն վարդապետն ալ այդպիսիներու շարքին մէջ կը մնայ: Ի՞նչու այս աչքի զարնող փոփոխութիւնը. գեռ երէկ Բար- կէն գաւառէն շլթալակապ Պոլիս կը բերուէր իբր՝ կրակոտ, հայ ժողովրդին շահերը պաշտպա- նող հոգեւորականը, իսկ այսօր Սուլթանը շքանշանով կը զար- դարէ անոր հայ ցաւերուն հա- մար բարխող կուրծքը:

Բարկէն ալ փոխուեցաւ, թէ Սուլթան փոխուեցաւ ու հայ ժո- ղովրդի շահերը պաշտպանող հոգեւորականները կը վարձա- տրէ... էն

ԲԱՅ ՆԱՄԱԿ Մ. ՃԻՎԷԼԷԿԵԱՆԻ

Պարոն, երկու տարի առաջ դուք, Քոնստանտնուպոլիսի մէջ մեր գործակալի պաշտօնը վա- րելով՝ այնտեղի մեր բաժա- նորդներէն գանձեցիք 1899 թւա- կանի բաժնեգրիներէն մօտ հա- ռիւր ֆրանք եւ ԿԵՐԱՔ. մեր գի- մուններուն վրայ դուք քանի մը անգամ նամակներով աղաչեցիք որ ձեզի խնայենք եւ ձեր անու- նը «Շարժում»-ի մէջ չը հրատա- րակենք, որովհետեւ շուտով գրամը պիտի զրկէք. ձեր այդ նամակները Պուքրէշէն կը զրկէիք մեզ:

Ահա երկու տարին կանցնի եւ դուք գրամը զրկած չէք, ու կաշ- խատիք ձեր տեղը մեզմէ գաղտնի պահել: Վերջին անգամ ձեզ կը զրկենք հրապարակով եւ կը խնդրենք լրբութիւնը չունենալ «Շարժում»-ին գրամները կլլելու. եթէ այս անգամ ալ մեր գրամնե- րը չը վերադարձնէք, մենք դա- տարանով պիտի գանձենք ձեզմէ այդ գրամը:

Պր. Շարժումի Վառնա 1901 Սեպտ. 1

Մենք յեղափոխական ազիտատորի քարոզչի երես չենք տեսնում: Մենք յեղափոխական թերթեր չենք կարողում. որովհետեւ նրանք շատ ուշ ուշ են հասնում մեզ, կամ բոլոր- ովին չեն հասնում:

Մենք բուն երկրի ժողովրդի տրա- մադրութիւնների հոգեկան վիճակի մասին ոչ մի գաղափար չենք ստա- նում. ուրեմն ինչպէս կարող ենք ու- գեւորվել, ինչպէս մեր մէջ կարող է ետանդ մնալ:

Մեզ շրջապատում են մեռածները, դիակնացածները. իսկ եւս առաջնորդի կենդանի մտացածների մասին ոչ մի տեղեկութիւն չունենք:

ՎԱՐՊՈ (Շարունակելի)

ՍԶԴ

Թաղական խորհուրդս կը փութայ ծանուցանել թէ Ազգ. վարժարանաց և մանկապարտէզի վերաբարցումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Սեպտ. 3ին երկուշաբթի օր:

Ուստի կը հրաւիրուին ծնողք և պաշտպանք ներկայանալ, ամէն օր առաւոտները ժամը 8—12 իսկ կէսօրէն յետոյ ժամը 2—5 ի թաղական խորհրդարան իրենց զաւակաց մտից արտօնագիրը ստանալու համար:

Ի դիմաց թաղ. խորհրդոյ Ատենադպիր Ատենապետ Ս. Գափրիէիանն Յ. Թովմասեան

ՊՈՒՐԿԱԶԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՐՈՒՆ ԶԱՄԱՐ

Ժամանակէ մը ի վեր քաղաքիս հրապարակին վրայ երեւնալ ըսկած է Յովհաննէս Սահակեան անունով անձ մը որ կաշխատի մուտ գործել տղաքային շրջանակներու մէջ և միամիտ ու խելճ դասակարգը շահագործել, օգտուելով անոնց տգիտութենէն: Ազգային ու անհատական պարտականութիւն մը կատարած ըլլալու և Յովհաննէս Սահակեանի ի՞նչ ըլլալը հասկըցնելու համար յարգելի հասարակութեան թարգմանաբար կը հրատարակենք «Տրտալէն Վեստնիք» կառավարական թերթի այդ անձի մասին հրատարակած յայտարարութիւնը:

ՏՐՏԱՎԷՆ ՎԵՍՏՆԻՔ ԹԻԻ 221 21 հոկա. 1898

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՍԶԴ Կ. 142 ԶԵՆՈՒԳՐԱԿԱՆ ԵՒ ԹՂԹԱՏՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱԿԱՆ ԶԱՄԱՐ

Կանոնագրութեան հօթերորդօրէնքի համաձայն վերջին աստիճանի գատապարտելի կը համարուի թէ կայարանի պաշտօնին մէջ և թէ դուրսը ունեցած վարքովը: Այսինքն առանց ունէ հրամանի բացակայութեան պաշտօնէ և Տեսչութեան կողմանէ իր անբարոյական վարմունքի համար եղած գիտողութիւնները ու կարգադրութիւնները չի գործադրել: որով անհանդուրժելի եղած է իր պատակարարին մէջ և յառաջիկային իր պաշտօնին մէջ կենալը տգիտամարտնչութիւն է իր պաշտօնին բարձրութեան:

Այս ամէնը նկատուած է Պուրկազի կայարանին ինքրորդ կարգի հեռագրի պաշտօնեայ Յովհաննէս Սահակեանի վրայ, որուն ուղղուելու համար եղած կարգապահական պատիժները բնաւ պարտաւար չեն ընդհատուած իր վրայ:

Պուրկազ 23 օգոստ. ...

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Գարակէօզեանի կտակին գումարովը Ս. Փրկչի հիւանդանոցի համար կալուած մը գնելու խնդիրը գեռ կարգադրուած չէ: Նախ Թերապի մէջ գտնուող Միսիրի օթէլը ծախու առնել որոշուած էր, բայց յետոյ կարգ մը անպատեհութիւններ նկատուի ունենալով, այդ գիտարարութեան հրաժարած են: Հիմա կը խորհին դարձեալ Թերապի մեծ փողոցին վրայ մեծ գետին մը գնել ուր քանի մը մեծ խանութներ պիտի կառուցուին: Սակայն այդ գետինը որ 15000 լիրա կարժէր, հիմա 25—30000 հաշիւ կը տրուեր:

Գրիգոր Գարակէօզեան այս վերջին որոշումը աւելի նպաստաւոր գտած է և խօստացած է դրամին պակաս մասը իր քովէն տալ:

Տիրար Մինաս Չէրազ շնորհաւորական նամակ մը զրկած է Հոլանտիոյ ազատական կուսակցութեան ետին որ այժմ նախարարպետ ընտրուած է և որ Չէրազի խաղաղութեան վեհաժողովի առթիւ Լահէ գտնուած միջոցին զինքը պաշտպանած էր թրքական էնթրիկներուն դէմ: Չէրազ իր և հայ ազգի կողմէն շնորհաւորութիւն յայտնելէ յետոյ հայասէր նախարարպետին յոյս կը յայտնէ թէ պէտք եղած ժամանակ աւելի պիտի պաշտպանէ հայ գաղթը:

Ասորինքը Տիրքանակերտի Մակարայեցոց վանքը գրաւելու փորձեր ընելէ յետոյ, հիմակ ալ երուսաղեմի մէջ իրենց կաթողիկոսէն դրդուած Սուրբ Յարութեան տաճարին Յովսէփ Արէմաթացիի մատուռը կուզեն գրաւել: Սակայն հին Սուլթաններու հրովարտականքով յիշեալ մատուռին հայոց սեփականութիւն ըլլալը կապացուցուի:

Ինքիքը յանձնուերն է տեղւոյն կառավարութեան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պ Ո Ւ Ր Ք Ի Ս

Օգոստ. 27ին Թրանսազի պահանջատէր Թիւպէնի մեծ Վէզիրին հետ տեսակցութիւն պիտի ունենար իւր պահանջքի ինքիքը կարգադրելու համար: Կըսուի թէ համաձայնութիւնը պիտի կայանայ 160,000 լիրայի վրայ: Լօրանտօի գործի մասին առայժմ խօսք չիկայ:

Աւստրիական և Թրանսական սուրհանդակներուն վրան Սերպիոյ սահմանադիրին և Սելանիքին մէջ թրքաց կողմէն եղած բռնութիւններուն համար՝ աւստրիական դեսպանը խիստ դիմումներ ըրած է Բ. Գրան:

Ամերիկեան գեսպանի պահանջքին վրայ, Սուլթանը Սելանիքի վալիին հրամայած է աւստրիական դեսպանին հետ խօսակցութիւնը կատարուած միտիոնարօն Միսր էլլէնը և իր ընկերուհին շուտով ազատել:

Ամերիկացի Միսսօնէրուհի էլլէնեան ազատ արձակելու համար զայն փախցնող աւազակները քսան հազար թրքական ոսկի կուզեն:

Արտասահմանի տմբոյլ մուտք կը յայտարարէ որ, ապագային աւելի խիստ միջոցներ պէտք է ձեռք առնել անիշխանականներուն դէմ: Ամէնքն ալ կը նկատեն որ Մակ-Բիլին զէմ կատարուած փորձը կապացույց է թէ՛ անիշխանականները ոչ միայն բռնապետական կառավարութիւններու թշնամի են, այլ և ամէն մէկ կազմակերպուած պետութեան:

Հակառակ Բ. Գրան ջանքերուն ուղղակի Թրանսական հպատակներու հետ յարաբերութեան մէջ մտնալով գործը կարգադրել գործերու վիճակը յոյն կը մնայ, ինչ որ էր Կոնսթանտինուպոլիսէն առաջ:

Արտաքին գործոց նախարար տեսնելով որ Թրանսական դեսպանատան խորհրդակցներ Պարսթիւր քովը չի գտր շտապեր է անոր քով զրկել նախարարութեան խորհրդական Հարթի պէյը, որ Պարսթը տունը չը գտնալով գրաւոր երկար ծանուցագիր մը թողուցեր է:

Ա. Մ. Ե. Ի. Ա.

Պօէրնբուրգ զլխաւորները նոր շրջաբերական մը հաներ են, որուն մէջ կը յայտարարեն թէ՛ օգոստոսի 8ը նշանակուած է մալթանքներ կատարելու համար: Այդ շրջաբերականէն կը յայտնուի որ Պօէրնբուրգ ամենեւին յուսահատած չեն, և իրենց կարծիքով փճակին ըստ բաւականին դոհացուցիչ է:

Պ. Ս. Ս. Ս. Ս. Ս.

Վէսէլօ հայ գերատանական խումբը, որ աւելի ճոխացած է ռուսական տուէթիստներով յառաջիկայ երկուշաբթի Ռուսոմոգէն քաղաքս պիտի ժամանէ և հինգշաբթի սեպտ. 6ին առաջին ներկայացումը պիտի սկսի և ամբողջ ձմեռուան սէզօնը պիտի անցունէ Վստնա:

Տեղաւորութիւն Սանդրալ սրահի:

Պ. Ս. Ս. Ս. Ա. Կ.

Երկամեայ գրական, գիտական և զեղարուեստական հանդէս՝ Խորհրդարանութեան Ս. Գ. Հաստիմեանի հրատարակուած է Ա. Թիւր ճոխագոյն պարունակութեամբ և 88 էջերով, տարեկան բացնելու է 25 ֆր. դիմել խմբագրին, 64, րիւֆլօս-Պլէնար

Ա. Չ. Դ.

Կը ծախուի 1896ին փարս. 2ին իշխան Պորիսի մկրտութեան առթիւ տպուած գործածուած նամակագրօշներ 1—5—15—25 սանդիմ: Գրիմել ՄԵՍՐՈՊ ՄՈՒՐՍԵԱՆ Վստնա

Մակ-Բիլին վրայ կատարուած սպաննութեան փորձը:

Պ. Ս. Ս. Ս. Ս. Ս.

Օգոստոս 31ին եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ՛ Մակ-Բիլին առողջական վիճակը գէշցեր է:

Պ. Ս. Ս. Ս. Ս. Ս.

Պօէրնբուրգ զլխաւորները նոր շրջաբերական մը հաներ են, որուն մէջ կը յայտարարեն թէ՛ օգոստոսի 8ը նշանակուած է մալթանքներ կատարելու համար: Այդ շրջաբերականէն կը յայտնուի որ Պօէրնբուրգ ամենեւին յուսահատած չեն, և իրենց կարծիքով փճակին ըստ բաւականին դոհացուցիչ է:

Պ. Ս. Ս. Ս. Ս. Ս.

Վէսէլօ հայ գերատանական խումբը, որ աւելի ճոխացած է ռուսական տուէթիստներով յառաջիկայ երկուշաբթի Ռուսոմոգէն քաղաքս պիտի ժամանէ և հինգշաբթի սեպտ. 6ին առաջին ներկայացումը պիտի սկսի և ամբողջ ձմեռուան սէզօնը պիտի անցունէ Վստնա:

Տեղաւորութիւն Սանդրալ սրահի:

Պ. Ս. Ս. Ս. Ա. Կ.

Երկամեայ գրական, գիտական և զեղարուեստական հանդէս՝ Խորհրդարանութեան Ս. Գ. Հաստիմեանի հրատարակուած է Ա. Թիւր ճոխագոյն պարունակութեամբ և 88 էջերով, տարեկան բացնելու է 25 ֆր. դիմել խմբագրին, 64, րիւֆլօս-Պլէնար

Ա. Չ. Դ.

Կը ծախուի 1896ին փարս. 2ին իշխան Պորիսի մկրտութեան առթիւ տպուած գործածուած նամակագրօշներ 1—5—15—25 սանդիմ: Գրիմել ՄԵՍՐՈՊ ՄՈՒՐՍԵԱՆ Վստնա

Отговорникъ: Мурадъ Ераносянъ

Печ. Взаимность — Варна